15.	Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով)	պարտադիր	ոչ պարտադիր (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը գնումների հետ կապված չի կիրառվում)	(չի լրացվում եւ չի կիրառվում)
16.	արժույթը (բառերով և կողով)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
17.	գործարքի նպատակը	պարտադիր	Պարտադիր լրացվում է «պայմանագրի կատարման ապահովման համար» բառերը	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
18.	Վճարման կատարման հիմքերը՝	պարտադիր	պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին լրացվում է պահանջագրի	լրացվում է շահառուի կողմից

			ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը, գնման ընթացակարգի ծածկագիրը ըստ տուժանքի մասին համաձայնագրի,	
19.	Վճարման պայմանները՝	պարտադիր	պարտադիր լրացվում է <ակցեպտավորված վճարում> բառերը, որը նշանակում է որ վճարողը ստորագրելով պահանջագիրը նախապես տալիս է իր համաձայնությունը նշված գումարը իր հաշվից գանձելու համար	նախապես լրացվում է շահառուի կողմից
20.	առդիր էջերի քանակը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին (վճարողի բանկին) Եթե ե լրացվել է <Վճարման կատարման հիմքեր> դաշտը ապա այս տվյալը պարտադիր լրացվում է:	լրացվում է շահառուի կողմից
21.ա.	վճարողի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր այս դաշտը լրացվում է վճարողի կողմից պահանջագրի ներկայացման դեպքում: Ընդ որում եթե Վճարման պայմաններ դաշտում նշված է <ակցեպտավորված վճարում> ապա վճարողը ստորագրելով՝ նախապես համաձայնվում նշված գումարը իր հաշվից գանձելու համար: Վճարողի կողմից էլեկտրոնային եղանակով պահանջագրի ներկայացման դեպքում այս դաշտում դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը:	ստորագրվում է վճարողի կողմից կամ դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը
21.բ.	վճարողի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում, երբ վճարողը պահանջագիրը ներկայացնում է թղթային եղանակով	կնքվում է վճարողի կողմից թղթային եղանակով ներկայացնելիս
22.ա.	շահառուի ստորագրությունը	պարտադիր	Պարտադիր՝ լրացվում է բանկ ներկայացնելիս	ստորագրվում է շահառուի կողմից
22.բ.	շահառուի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է շահառուի կողմից թղթային եղանակով բանկ ներկայացնելիս
23.ա .	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի)	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային	

	աշխատակցի ստորագրությունը		եղանակով ներկայացված լինելու դեպքում	
23.բ.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում	
23.գ	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	
24.ա.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը ներկայացվելու դեպքում, որտեղ աշխատակցի ստորագրությունը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	
24.բ.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	
24.գ	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԾՁԲ-21/126**

ք. _____

«___» _____ 20 թ.

«_____», ի դեմս _____ -ի, որը գործում է _____ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և _____-ն, ի դեմս տնօրեն _____-ի, որը գործում է _____ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի Նոր Նորք, Աջափնյակ, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ավտոտրանսպորտի վարձակալության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը փեղեկագրում հրապարակելը:

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է _____ (_____ տառերով) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁸

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար՝ 15 (տասնհինգ) տոկոսի չափով:²¹ և 3-րդ չափաբաժնի համար՝ 1(մեկ) տոկոսի չափով, 4-րդ չափաբաժնի համար 3(երեք) և 5-6րդ չափաբաժնի համար՝ 15 (տասնհինգ) տոկոսի չափով և 7-րդ չափաբաժնի համար՝ 3(երեք) , 8-րդ չափաբաժնի համար՝ 1(մեկ) 9-րդ չափաբաժնի համար՝0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) 3-րդ չափաբաժնի համար՝ 0.1(զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով և 4-րդ չափաբաժնի համար՝0.19(զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) ,5-6րդ չափաբաժնի համար՝ համար 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) և 7-րդ չափաբաժնի համար՝0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) 8-րդ չափաբաժնի համար՝ 0.1(զրո ամբողջ մեկ տասնորդական) ,9-րդ չափաբաժնի համար՝ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

¹⁸Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

¹⁹ Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

²⁰Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

²¹Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանն ընդհանուր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

²³Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: ²⁴Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:²³

²³Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: ²⁴Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համալրել գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:²⁴

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

²⁴Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համադրել գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ****Նոր Նորք վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ**

Ծառայության								
Զ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Զ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	60171100/10	Նոր Նորք վարչական շրջանի զորակոչիկների և զինապարտների տեղափոխում և հետ վերադարձ ավտոբուսներով: Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ են 35-50 տեղանոց, փափուկ նստատեղերով մարդատար տրանսպորտային միջոցներ վարորդի հետ միասին: Տրանսպորտային միջոցը պետք է լինի 2010 թ. և ավելի բարձր արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկողով: Սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերը լինեն լավ վիճակում: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից առնվազն 2 օր առաջ ներկայացված պատվերի հիման վրա: Պատվերները լինելու են Երևան քաղաքում /մեկնումը հետադարձով/: Ծառայությունը ներառում է սպասեւլարձը: Մինչև 8 երթ:	Դրամ			1	Ք. Երևան Նոր Նորք վարչական շրջան	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 21 օրացուցային օր հետո մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ
	60171100/11		Դրամ			1	Ք. Երևան	պայմանագիրը

2		Նոր Նորք վարչական շրջանի զորակոչիկների և զինապարտների տեղափոխում և հետ վերադարձ ավտոբուսներով: Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ են 35-50 տեղանոց, փափուկ նստատեղերով մարդատար տրանսպորտային միջոցներ վարորդի հետ միասին: Տրանսպորտային միջոցը պետք է լինի 2010 թ. և ավելի բարձր արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկողով: Սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերը լինեն լավ վիճակում: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից առնվազն 2 օր առաջ ներկայացված պատվերի հիման վրա: Պատվերները կարող են լինել ՀՀ և Արցախի հանրապետության ամբողջ տարածքում: Ծառայությունը ներառում է սպասելավարձը: Մինչև 1280 կմ:					Նոր Նորք վարչական շրջան	ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 21 օրացուցային օր հետո մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ
---	--	---	--	--	--	--	-------------------------	---

Աջափնյակ վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ

Ծառայություն								
Զ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Զ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը մինչև	ընդհանուր քանակը	մատակարարման	
							հասցեն	Ժամկետը
3	60171200/4	Ավտոբուսների վարձակալության բարձրակարգ ծառայությունների մատուցում՝ ըստ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմի կողմից ներկայացված պատվերի: Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի առնվազն 2010թ. արտադրության, տեխնիկական զննություն անցած, նոր անվադողերով, կահավորված 25-50 փափուկ նստատեղերով, օդորակիչներով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության	դրամ			1	Արա Սարգսյան 5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2021թ.

		գոտիներ, դեղարկղ, կրակմարիչ): Վարորդը պետք է ունենա համապատասխան որակավորում, վարորդական իրավունք: Ծառայությունը իրականացվում է ըստ պահանջի և պատվերի դեպքում 60 րոպեի ընթացքում կատարողի կողմից ավտոմեքենան պետք է տրամադրվի պատվիրատուին: Մինչև 4000 կմ:						
--	--	---	--	--	--	--	--	--

Դավթաշեն վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ

Ծառայության								
Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավորի գինը /ՀՀ դրամ/ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ դրամ/	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
4	60171200/6	Զինապարտների հաշվառման, գորակոչի, գորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն՝ ծրագրով անհրաժեշտություն է առաջացել գորակոչիկների ուղևորատար ավտոբուսներով փոխադրման ծառայությունների ձեռքբերում: Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ են կահավորված օդորակիչներով, դեղարկղով, 45-50 փափուկ նստատեղերով վարորդի հետ միասին, 2010 թ-ից բարձր արտադրության ավտոբուսներ: Ավտոբուսները պետք է լինեն պարտադիր տեխնիկական զննություն անցած, անհրաժեշտ է վարորդները լինեն ներկայանալի տեսքով, ծառայությունը մատուցեն ժամանակին և առավելագույնս անվտանգ, նվազագույն վարորդական փորձը 3 տարի: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից ներկայացված ժամանակացույցով և երթուղով: Ծառայությունը ներառում է սպասելավարձը: Մինչև 1200 կմ	դրամ			1	Դավթաշեն վարչական շրջան	Մինչև 25.12.2021թ

Էրեբունի վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ

Ծառայության								
Ձ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ձ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
5	60171100/7	Էրեբունի վարչական շրջանի զորակոչիկների և զինապարտների տեղափոխում և հետ վերադարձ ավտոբուսներով: Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ են 35- 50 տեղանոց, փափուկ նստատեղերով մարդատար տրանսպորտային միջոցներ՝ վարորդի հետ միասին: Տրանսպորտային միջոցը պետք է լինի 2010 թ. և ավելի բարձր արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկողով: Սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերը լինեն լավ վիճակում: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից առնվազն 2 օր առաջ ներկայացված պատվերի հիման վրա: Պատվերները լինելու են Երևան քաղաքում: Ծառայությունը ներառում է սպասելավարձը: Մինչև 8 երթ:	Դրամ			1	Ք. Երևան Էրեբունի վարչական շրջան	Ձեռք բերման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 21 օրացուցային օր հետո մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ
6	60171100/9	Էրեբունի վարչական շրջանի զորակոչիկների և զինապարտների տեղափոխում և հետ վերադարձ ավտոբուսներով: Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ են մինչև 35-50 տեղանոց, փափուկ	Դրամ			1	Ք. Երևան Էրեբունի վարչական շրջան	Ձեռք բերման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից

		նստատեղերով մարդատար տրանսպորտային միջոցներ վարորդի հետ միասին: Տրանսպորտային միջոցը պետք է լինի 2010 թ. և ավելի բարձր արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկողով: Արահը լինի խնամված, մաքուր, նստատեղերը լինեն լավ վիճակում: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից առնվազն 2 օր առաջ ներկայացված պատվերի հիման վրա: Պատվերները կարող են լինել ՀՀ և Արցախի հանրապետության ամբողջ տարածքում: Ծառայությունը ներառում է սպասելավարձը: Մինչև 1280 կմ:						առնվազն 21 օրացուցային օր հետո մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ
--	--	--	--	--	--	--	--	---

Կենտրոն վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ

Չ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիր	Չ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	Մատուցման	
								հասցեն	Ժամկետը
7	60171200/7	Տրանսպորտային ծառայություն	Զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն՝ ծրագրով նախատեսված զորակոչիկներին ուղևորատար ավտոբուսներով փոխադրման ծառայությունների կազմակերպում: Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ են կահավորված օդորակիչներով, 45-50 փափուկ նստատեղերով, 2005 թ-ից բարձր արտադրության ուղևորատար ավտոբուսներ: Անհրաժեշտ է վարորդները լինեն ներկայանալի տեսքով, ծառայությունը մատուցեն ժամանակին և առավելագույնս անվտանգ, նվազագույն վարորդական փորձը 3 տարի: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից ներկայացված ժամանակացույցով և երթուղով /նվազագույնը մինչև 4000 կմ/	դրամ			1	ք.Երևան, Տեքյան 44	Նախատեսվում է գնել 2021թ. ընթացքում՝ մինչև դեկտեմբերի 25-ը

Շենգավիթ վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ

Զ/Հ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Զ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
								հասցեն	Ժամկետը
8	Զինապարտների հաշվառման, գոակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցության ծրագրերի շրջանակներում միջոցառումների հետ կապված ծառայություններ	79951100/5	Շենգավիթ վարչական շրջանում զինապարտների հաշվառման, զորահավաքի,զորակոչի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցման միջոցառումներ,որոնք պետք է իրականացնել ըստ պահանջի և սահմանված ժամկետներում: 1.Զորակոչիկների,զինապարտների և վարժական հավաքների մասնակիցների տեղափոխումը և ետ վերադարձը ավտոբուսներով: Նշված փոխադրումների իրականացման համար անհրաժեշտ են 45-50 կամ՝ 25-ից 30 փափուկ նստատեղով, 2010թ. և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական գնություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկողով: Սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերը լինեն գերազանց վիճակում: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից առնվազն 2-օր առաջ ներկայացված պատվերի հիման վրա: Պատվերները կարող են լինել Երևան քաղաքում,ինչպես նաև ՀՀ և Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում: 1. Սկզբնակետից մինչև 25 կմ երկարությամբ երթուղիների համար(ներառյալ սպասելավարձը)400կմ: 2. Սկզբնակետից 26 կմ և ավելերկարությամբ երթուղիների համար(ներառյալ սպասելավարձը) 2000կմ: Պատվիրատուի կողմից ներկայացված համապատասխան հավաքի տևողությունից կախված մասնակիցներին (մինչև 400 միավոր) օրապահիկի ապահովում՝ 2 հանքային սեղանի ջուր շշացված 0.5լ տարաներով, սենդվիչներ (հաց՝ 750գ, խոզապուխտ՝175գ, պանիր՝ 25գ, համակցված բանջարեղենային հավելումով՝ 50գ),թխվածքաբլիթ,վաֆլի՝75գ: Մատակարարվող օրապահիկի չափաբաժինները ըստ օրերի համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարվող սննդի անվտանգությունը՝ սանիտարահամաճարակային կանոններին և նորմերին և <<Մենդամերքի անվտանգության մասին՝ ՀՀ օրենքի >>պահանջներին համապատասխան: Հավաքների անցկացման ընթացքում բարձր պատրաստականություն ցուցաբերած	դրամ		1	Ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան	Նախընտրելի ժամկետ է համարվում պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 21 օրացուցային օր հետո մինչև 25.12.2021թ.	

			մասնակիցներին պարզատրման համար 15 հատ շնորհակալագրերի, 15 հատ պատվոգրերի ապահովում՝ A4 ֆորմատ, կալճապատ, 300գ, տպագրությունը միակողմանի 1x4 գույն, յուղային լաք, ուրվապատկերով, նախապես համաձայնեցված պատվիրատուի հետ:						
--	--	--	--	--	--	--	--	--	--

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ

Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
9	60171200/3	Ավտոբուսների վարձակալության բարձրակարգ ծառայությունների մատուցում՝ ըստ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի աշխատակազմի կողմից ներկայացված պատվերի: Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի առնվազն 2014թ. արտադրության, տեխնիկական զննություն անցած, նոր անվադողերով, կահավորված 25-50 փափուկ նստատեղերով, օդորակիչներով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, դեղարկող, կրակմարիչ): Վարորդը պետք է ունենա համապատասխան որակավորում, վարորդական իրավունք: Ծառայությունը իրականացվում է ըստ պահանջի և պատվերի դեպքում 60 րոպեի ընթացքում կատարողի կողմից ավտոմեքենան պետք է տրամադրվի պատվիրատուին: Ծառայության մատուցման ընդհանուր ծավալը կազմում է մինչև 1750 կմ:	դրամ		1	ք. Երևան Դ. Անհաղթի 11	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2021թ.

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/

/ստորագրություն/

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայություն													
Ձ/Հ	գնումների պլանով նախատեսվա ծ միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմա ն (CPV)	Ծառայության անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1-2	60171100	Նոր Նորք վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ	75%	75%	75%	75%	75%	75%	100%	100%	100%	100%	
3	60171200	Աջափնյակ վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ	50%	50%	50%	75%	75%	75%	100%	100%	100%	100%	
4	60171200	Դավթաշեն վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ	50%	50%	50%	75%	75%	75%	100%	100%	100%	100%	

5-6	60171100	Էրեբունի վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ	50%	50%	50%	75%	75%	75%	100%	100%	100%	100%
7	60171200/7	Կենտրոն վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ	50%	50%	50%	75%	75%	75%	100%	100%	100%	100%
8	79951100/5	Շենգավիթ վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ	50%	50%	50%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
9	60171200/3	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տրանսպորտի վարձակալության ծառայություններ	75%	50%	50%	50%	75%	75%	100%	100%	100%	100%

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
« » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը
և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

NOTICE

ON PRICE QUOTATION

This text of the notice is approved by decision of the Price Quotation Commission"3" of 15.04.2021 and is published pursuant to Article 27 of the Law of the Republic of Armenia "On procurement"

Code of the price quotation EQ-GHTsDzB-21/126

The contracting authority Yerevan municipality, located at the following address: 1 Argishti Str, Yerevan, RA, gives notice for a price quotation which shall be carried out in one stage, through Armeps (www.armeps.am) system of electronic procurement.

The bidder selected based on the results of the price quotation will be proposed, in a prescribed manner, to conclude a contract on acquisition **of services** (hereinafter referred to as "the contract").

Pursuant to Article 7 of the Law of the Republic of Armenia "On procurement", any person, irrespective of the fact of being a foreign natural person, an organisation or a stateless person, shall have equal right to participate in the price quotation.

The qualification criteria for the persons ineligible to participate in the price quotation, as well as for bidders, and the documents to be submitted for the evaluation of those criteria shall be established by the invitation for this procedure.

The selected bidder shall be determined from among the bidders having submitted bids evaluated as satisfying the requirements of the invitation, by the principle of giving preference to the bidder having submitted the lowest price proposal.

For receiving the hard copy of the invitation for the price quotation, it is necessary to apply to the contracting authority by **10:00 am 23.04.2021**. Moreover, an application in writing must be submitted to the contracting authority for receiving the hard copy of the invitation. The contracting authority shall ensure the of charge provision of the hard copy of the invitation (or in case of submitting, attached to the application, the copy of the document issued by the bank,

attesting to the payment of AMD 1000 which may not exceed the amount of costs incurred for photocopying and delivering the invitation) on the first working day following the receipt of such request. (The payment must be made to the bank account 247010087184 of “Departmental Buildings Operation and Maintenance” CSC in “Ardshinbank”.).

In case of a request to provide the invitation electronically, the contracting authority shall ensure the free of charge provision of the invitation electronically within the working day following the date of receipt of the application.

Failure to receive the invitation shall not limit the bidder's right to participate in this procedure.

The bids for the price quotation must be submitted electronically, through Armeps (www.armeps.am) system of electronic procurement, by **10:00 am 23.04.2021**. The bids may, in addition to Armenian, also be submitted in English or Russian.

The bid opening will take place electronically, through Armeps system of electronic procurement, at **10:00 am 23.04.2021**.

The appeals concerning this procedure must be filed to the Procurement Appeals Board, to the following address: Melik-Adamyan St. 1., Yerevan. The appealing shall be carried out as prescribed by the invitation for this price quotation. For filing the appeal, a fee shall be required in the amount of AMD 30 000 (thirty thousand), which must be transferred to the treasury account 900008000482 opened in the name of the Ministry of Finance of the Republic of Armenia.

For receiving additional information concerning this notice, you may apply to **A. Khachatryan** Secretary of the Evaluation Commission.

Telephone 011-514-194

E-mail anahit.khachatryan@yerevan.am

Contracting authority Yerevan municipality

ОБЪЯВЛЕНИЕ

КОНКУРСЕ*

Настоящий текст объявления утвержден Решением Оценочной Комиссии от
"15.04." 2021 года "З"

Код процедуры EQ-GHTsDzB-21/126

Заказчик мэрия г.Еревана, находящийся по адресу: РА, г.Ереван, ул. Аргишти 1 объявляет запрос котировок, который проводится одним этапом, посредством системы электронных закупок Armpers (www.armpers.am).

Участнику, отобранному по итогам настоящей процедуры, в установленном порядке будет предложено заключить договор на приобретение **по Услуги по аренде автомобилей**. (далее — договор).

Согласно статье 7 Закона Республики Армения "О закупках", любое лицо, независимо от того, является ли оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства, имеет равное право на участие в настоящей процедуре.

Условия предъявляемые к лицам, не имеющим права на участие в данной процедуре, а также участникам, установлены приглашением на настоящую процедуру.

Отобранный участник определяется из числа участников, подавших заявки, оцененные удовлетворительно по неценовым условиям, по принципу предпочтения, отдаваемого участнику, представившему минимальное ценовое предложение.

Для получения приглашения на процедуру в бумажной форме необходимо обратиться к заказчику **10:00 часов, 23 апреля 2021-го года** годадня со дня опубликования настоящего объявления. При этом для получения приглашения в бумажной форме заказчику должно быть представлено письменное заявление. Заказчик обеспечивает бесплатное предоставление приглашения в бумажной форме (или в случае представления вместе с заявлением копии выданного банком документа, подтверждающего уплату 1000 драмов РА, которые не могут превышать размер производимых расходов на копирование и доставку приглашения¹⁾ в первый рабочий день, следующий за получением такого требования. Платеж необходимо внести "Ардшинбанк" на расчетный счет ЗАО "Эксплуатация и содержание ведомственных зданий" мэрии г. Еревана N 247010087184.)

При наличии требования о предоставлении приглашения в электронной форме заказчик обеспечивает бесплатное предоставление приглашения в электронной

¹⁾Указанная в скобках фраза исключается, если за предоставление приглашения не предусматривается платеж; в противном случае слово "бесплатно" исключается из предложения.

форме в течение рабочего дня, следующего за днем получения заявления.

Неполучение приглашения не ограничивает права участника на участие в настоящей процедуре.

Заявки на настоящую процедуру необходимо подать в электронной форме, посредством системы электронных закупок Armeeps (www.armeeps.am), **10:00 часов, 23 апреля 2021-го года** дня с даты опубликования настоящего объявления.

Кроме армянского языка заявки могут быть поданы также на английском или русском языке.

Вскрытие заявок будет проводиться в электронной форме, посредством системы электронных закупок Armeeps, в **10:00 часов, 23 апреля 2021-го года**.

Жалобы относительно настоящей процедуры должны быть поданы лицу, рассматривающему связанные с закупками жалобы по адресу: ул. Мелик-Адамяна 1, Ереван. Обжалование осуществляется в порядке, установленном приглашением на настоящий конкурс. Для подачи жалобы требуется плата в размере 30 000 (тридцать тысяч) драмов РА, которая должна быть перечислена на казначейский счет № 900008000482, открытый на имя Министерства финансов Республики Армения.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю Оценочной комиссии **А. Хачатряна**.

Телефон' 011514194

Электронная почта' anahit.khachatryan@yerevan.am

Заказчик' Мэрия г. Ереван

ПРИГЛАШЕНИЕ

ЗАПРОС КОТИРОВОК, ОБЪЯВЛЕННЫЙ С ЦЕЛЮ **по аренде автомобилей**
УСЛУГ ДЛЯ НУЖД МЭРИИ ЕРЕВАНА

Уважаемый участник, прежде чем составить и подать заявку просим Вас подробно изучить настоящее Приглашение, поскольку не соответствующие Приглашению заявки подлежат отклонению.

